

**ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի
ղեկավար Ա.Եղիազարյան
2018 թվականի տարեկան կատարած աշխատանքների
հաշվետվություն**

Մասնակցությամբ ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու և համայնքի
բնակիչների

ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ղեկավարը, ղեկավարվելով Հայաստանի հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող ենթաօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքներով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և համայնքային ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իրականացրել է իր լիազորությունները:

2018 թվականին համայնքապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են համայնքի սոցիալտնտեսական զարգացման առաջնային խնդիրները, որոնց լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել ՀՀ Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի, համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը: Կատարված աշխատանքներն ըստ բնագավառների ներկայացնում ենք ձեզ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում հիմնականում զբաղվում են պտղաբուծությամբ և այգեգործությամբ, ինչպես նաև բոստան-բանջարանոցային կուլտուրաների մշակմամբ:

2018 թվականին ստացվել է ծիրանի, դեղձի, սալորի և խաղողի բերքը:

Համայնքապետարանը մարզպետարանի հետ միասին աջակցել է գյուղացուն իրացնելու ստացված բերքը՝ կապ հաստատելով տարբեր վերամշակող և արտահանող կազմակերպությունների հետ: Ուշադրության կենտրոնում է պահվում գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարը:

Գյուղացուն ցույց է տրվել աջակցություն նաև պարարտանյութի, դիզելային վառելիքի և թունաքիմիկատների ձեռք բերման գործում:

Ամնիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության գործում, ժամանակին կատարվում են բոլոր հակահամաճարակային միջոցառումները:

Համայնքապետարանը տարբեր կազմակերպությունների հետ կոորդինացնում է ապրանքների իրացումը: Մասնավորապես խաղողի բերքի իրացման գործում պայմանագրեր ունենք Երևանի կոնյակի գործարանի, «Արարատ» կոնյակի գործարանի, ՄԱՊ-ի, «Սամկոն» ՍՊԸ-ի հետ: Ստացված բերքը ժամանակին և անկորուստ իրացնելու համար ձեռք են բերվել պայմանավորվածություններ մի շարք վերամշակող գործարանների հետ: Այս տարվա ծիրանի բերքն անկորուստ հավաքելու և իրացնելու համար համայնքապետարանն աջակցում է մի քանի արտահանող կազմակերպությունների, որպեսզի ծիրանի այգի ունեցողները բերքի իրացման որևէ խնդիր չունենան: 2018 թվականի բերքի անկորուստ իրացմանը մեծապես նպաստեց համայնքում պտղասառնարանի առկայությունը:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման համար:

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի ապառքների հավաքագրման ուղղությամբ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրում, սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել են ճշտված հատակագծեր:

Հացիկ գյուղը խմելու ջրով ապահովում են երկու խորքային հորեր, որոնցից մեկը գտնվում է վթարային վիճակում:

Խմելու ջրի ներքին ցանցը կառուցված է 1965թ.-ին, գտնվում է բավարար վիճակում, վթարները վերացվում են օպերատիվ և ժամանակին: 2018թ. ընթացքում խորքային հորերի սարքավորումների վերանորոգման համար համայնքի բյուջեից ծախսվել է 975 000 դրամ, ձեռք է բերվել նոր խորքային պոմպ, որպեսզի վթարների դեպքում բնակչությունը ապահովված լինի ջրով:

Քանի որ խորքային հորերից մեկը գտնվում է վթարային վիճակում, ջուրը չի բավականացնում, և գյուղի ջրամատակարարումն ապահովվում է 98%-ով: Համայնքի լիակատար ջրամատակարարումն ապահովելու համար անհրաժեշտ է նոր խորքային հոր, որի շուկայական գինը կազմում է մոտ 20 մլն. դրամ, որից համայնքապետարանը պատրաստ է ներդնել 5 մլն. դրամը:

Համայնքի սանիտարական վիճակը բավարար է: Պարբերաբար կատարվում է աղբահանություն, ինչպես նաև շաբաթական աղբահանություններ:

2018 թվականին համայնքի բյուջեից աղբահանության համար ծախսվել է 2169.0 հազար դրամ:

2018 թվականի բյուջեով մասնակի վերանորոգվել է համայնքի մշակույթի տունը, որի համար ծախսվել է 6289.8 հազար դրամ:

Փողոցների արտաքին լուսավորման համար 2018 թվականին ծախսվել է 1793.1 հազար դրամ: Ամեն ինչ արվում է ցանցի անխափան աշխատանքի համար:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնք ունի մեկ միջնակարգ դպրոց . 33 ուսուցիչ, 257 աշակերտ: Դպրոցի երկու մասնաշենքերը հիմնանորոգված են:

Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է գտնվում դպրոցը:

Համայնքապետարանի աջակցությամբ դպրոցի շենքում բացվել և գործում է նախակրթարան: Համայնքապետարանը դպրոցին տրամադրում է տարեկան 960.0 հազար դրամաշնորհ, որը որպես աշխատավարձ վճարվում է նախակրթարանի կրտսեր խմբի դաստիարակին: Համայնքապետարանն աջակցել է անապահով ընտանիքներին դասագրքերի վարձը վճարելու հարցում:

Վերջին զանգի կապակցությամբ շրջանավարտներին ցույց է տրվել դրամական օգնություն:

Նոր ուսումնական տարվա կապակցությամբ դպրոց հաճախող 25 առաջին դասարանցիներին համայնքապետարանի կողմից բաժանվել են պայուսակներ և գրեմական պարագաներ:

Մանկապարտեզը չի գործում, բնակեցված է փախստական և երկու անապահով բազմազավակ ընտանիքներով:

Ուշադրության կենտրոնում են թոշակառուները: Մարտի 8-ի կապակցությամբ բոլոր թոշակառու կանանց համայնքապետարանի կողմից մատուցվել են նվերներ:

Համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության կենտրոնում է առողջապահության ոլորտը, աջակցում է սանիտարահիգիենիկ վիճակի բարելավմանը, հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը, վերահսկում է առողջապահական հիմնարկի աշխատանքները:

Ուշադրության կենտրոնում է գտնվում սպորտի զարգացումը: Գյուղում գործում է արևելյան մարտարվեստի խմբակ, որի պարապմունքներն անց են կացվում դպրոցի մարզադահլիճում: Խմբակն ունի համապատասխան գույք: Դպրոցում սկսել է գործել պարի խմբակ: «Հացիկի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ը նույնպես իր աշխատանքները կազմակերպում է գյուղի դպրոցի մասնաշենքում:

Մշակույթի տան հիմնանորոգումից հետո խմբակներն իրենց աշխատանքները կկարողանան կազմակերպել ավելի լիարժեք պայմաններում:

Համայնքում գործում է Խնամակալության և հոգաբարձուների խորհուրդ, որի հիմնական խնդիրը անօթևան, դպրոց չհաճախող երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումն է: Համայնքում դպրոց չհաճախող երեխաներ չկան:

Սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցելու նպատակով 2018 թվականի բյուջեով նախատեսված է 3300.0 հազար դրամ, որից տրամադրվել է 2540,0 հազար դրամը: Օգնությունը տրամադրվում է բնակիչների դիմումների համաձայն:

Համայնքապետարանը նաև ցուցաբերել է աջակցություն համայնքի բնակիչներին, որոնք հանդիսանում են հանրապետության տարբեր ԲՈՒՀ-երի ուսանողներ՝ ուսման վարձը մասնակի վճարելով: 2018 թվականին ֆինանսական աջակցություն են ստացել 25 ուսանողներ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հացիկ համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեն ունի հետևյալ տեսքը.

Եկամտային մաս	պլան /հազար դրամ/	կատարված /հազար դրամ	
<u>վարչական բյուջե</u>			
1. հողի հարկ	16057.0	8485.1	52.8%
2. գույքահարկ փոխդրամիջ.	5935.2	5618.9	94.7 %
3. գույքահարկ շենք. շին.	170.0	138.5	81.5%
4. տեղական տուրքեր	250.0	278.7	115.1%
5. հողի վարձավճար	1765.0	1470.3	84.9%
6. տեղական վճարներ	820.0	262.4	32.0%
7. պաշտոնական տրասֆերտներ որից պետ. բյուջեից դոտացիա սուբվենցիա	30866.0 29699.1 1166.9	30866.0 29699.1 1166.9	100 % 100.0% 100.0%
8. տարեսկզբի ազատ մնացորդ ընդամենը	12408.3 68271.5	12408.3 59528.2	87.2%
<u>Ֆոնդային բյուջե</u>			
հողի օտարումից մուտքեր	2475.0	2510.5	101.4%
վարչական բյուջեի պահուստային ընդամենը	120.0 70886.5	120.0 62158.7	87.5%

Ծախսային մաս	պլան /հազար դրամ/	կատարված /հազար դրամ/	
<u>վարչական բյուջե</u>			
տեղական ինքնակառավարում	20790.0	17741.3	85.3%
համայնքային այլ ծառայություններ	3860.0	1480.1	38.3%
սոցապահովագր. և ապահով.	3800.0	2540.0	66.8%

մշակույթ, կրոն, սպորտ	2622.2	1856.7	70.8%
կրթություն	4286.9	4225.9	98.6%
դաշտամիջ.ճան.նորոգում	900,0	850.0	94.4%
սան. մաքրում	2370.0	2169.0	91.5%
փողոցների լուսավորում	1800,0	818.1	45.4%
ջրամատակարարում	10470,0	10010.9	95.6%
պահուստային ֆոնդ	4504.1		
ընդամենը	55863.2	42113.3	75.4%

<u>ֆոնդային բյուջե</u>			
սարքեր սարքավորումներ	5255.0	2495.0	47.5%
տրանսպորտային միջոցներ	1210.0	0	
նախագծային աշխատանքներ	150.0	150.0	100.0%
գեոդեզիական –քարտեզ.աշխ.	100.0	100.0	100.0%
կապ. նորոգումների ծախսեր	8288.3	7706.8	85.2%
ընդամենը	15003.3	10451.8	69.7%
<u>ընդամենը ծախսեր</u>	70866.5	52565.1	74.2%

Հացիկ համայնքի 2018 թվականի բյուջեն կազմելիս հաշվի են առնվել հետևյալ առաջնահերթ խնդիրները՝
 ա/ խմելու ջրի մատակարարումը
 բ/համայնքի աղբահանությունը
 գ/ճանապարհների վերանորոգումը
 դ/փողոցների լուսավորումը

- Համայնքում առկա հիմնախնդիրներն են՝
- 1.Համայնքի մանկապարտեզի շենքի հարցը:
 - 2.Նոր խորքային հորի հորատումը:
 - 3.Մշակույթի տան հիմնանորոգումը:
 - 4.Ներհամայնքային ճանապարհների մասնակի վերանորոգումը:

Հացիկ համայնքի ղեկավար՝

Ա.Եղիազարյան